



Australian Government



# COVID-19-ի դեմ պատվաստանյութեր երեխաների և դեռահասաների համար. տեղեկատվություն ծնողների և խնամակալների համար

Վերջին անգամ թարմացվել է՝ 10 հունվարի, 2022թ.

COVID-19-ի դեմ պատվաստանյութը հաստատված է և խորհուրդ է տրվում 5 տարեկան և ավելի բարձր տարիքի մարդկանց համար: COVID-19-ի դեմ պատվաստումների գրանցումներն այժմ հասանելի են 5 և ավելի բարձր տարիքի երեխաների համար:

Spikevax (Moderna)-ը հաստատված է և խորհուրդ է տրվում 12 տարեկան և ավելի բարձր տարիքի մարդկանց համար: Ներկայումս այն գնահատվում է 6-ից 11 տարեկան երեխաների համար:

## Ինչու՞ պետք է պատվաստվեն երեխաները և դեռահասաները:

Երեխաների և դեռահասաների համար COVID-19-ի դեմ պատվաստվելու բազմաթիվ պատճառներ կան, այդ թվում՝

- պաշտպանել COVID-19-ով վարակվելուց
- նվազեցնել ծանր հիվանդանալու, երկարատև կողմնակի ազդեցությունների կամ երկարատև COVID-ի վտանգը
- օգնել նրանց վերադառնալ դպրոց
- միանալ իրենց ընտանիքի և ընկերների հետ
- վերադառնալ այնպիսի գործունեությանը, որոնք նրանք սիրում են, ինչպիսիք են՝ թիմային սպորտը, համերգների գնալը և ճանապարհորդությունները և
- դանդաղեցնել վիրուսի տարածումը համայնքում:

COVID-19-ի դեմ պատվաստումը նաև պաշտպանում է նրանց.

- ընտանիքին
- ընկերներին
- դասընկերներին և
- թիմակիցներին:

## Ինչպե՞ս են գործում COVID-19-ի դեմ պատվաստանյութերը:

COVID-19-ի դեմ պատվաստանյութերը կարող են կանխել մարդկանց COVID-19-ով ծանր հիվանդանալուց: Պատվաստանյութերը սովորեցնում են ձեր օրգանիզմին ազատվել COVID-19-ից, եթե վարակվեք:

Pfizer և Moderna պատվաստանյութերը չեն պարունակում կենդանի վիրուս և չեն կարող ձեզ վարակել COVID-19-ով:

## Ինչ ակնկալել նրանց պատվաստումից հետո

Պատվաստանյութը սկսում է մարդկանց պաշտպանել COVID-19-ից առաջին դեղաչափից մոտ 2-3 շաբաթ անց:

Այդ իսկ պատճառով կարևոր է, որ ձեր երեխան շարունակի ապահով լինել և.

- պահպանի պատշաճ հիգիենա, օրինակ՝ ձեռքերը լվանալը
- պահպանի 1.5 մետր հեռավորություն այլ մարդկանցից
- հետևի հանրային հավաքների սահմանափակումներին և
- հասկանա, երբ և ինչպես պետք է մեկուսանալ, եթե դա անհրաժեշտ է:

## Արդյո՞ք նրանք կունենան կողմնակի ազդեցություններ:

Հնարավոր է ձեր երեխան ունենա որոշ կողմնակի ազդեցություններ պատվաստումից հետո: Կողմնակի ազդեցությունների մեծ մասը տևում է ոչ ավելի, քան մի քանի օր և նրանք կապաքինվեն առանց որևէ խնդիրների: Պատվաստման ընդհանուր հակազդեցությունները ներառում են.

- ձեռքի ցավ
- թեթև ջերմություն
- գլխացավ:

Եթե որևէ մտահոգություն ունեք ձեր երեխայի ախտանիշների հետ կապված, կարող եք լրացուցիչ տեղեկատվություն ստանալ [www.health.gov.au](http://www.health.gov.au) կայքում կամ զանգահարել National Coronavirus Helpline **1800 020 080** հեռախոսահամարով: Թարգմանչական ծառայությունների համար, զանգահարեք **131 450** և խնդրեք միացնել National Coronavirus Helpline:

Դուք կարող եք նաև քննարկել ձեր բժշկի կամ բուժաշխատողի հետ COVID-19-ի դեմ պատվաստման վերաբերյալ ցանկացած մտահոգություն կամ հարց՝ նախքան ձեր երեխայի պատվաստում ստանալը:

## Ի՞նչ պատվաստանյութ կստանա իմ երեխան:

5-ից 11 տարեկան երեխաների և 12 տարեկան և ավելի բարձր տարիքի մարդկանց համար COVID-19-ի դեմ պատվաստանյութերում կան որոշ տարբերություններ:

5-ից 11 տարեկան երեխաները կստանան պատվաստանյութի 2 դեղաչափ՝ 8 շաբաթվա տարբերությամբ: Հատուկ հանգամանքներում այն կարող է կրճատվել մինչև նվազագույնը 3 շաբաթ: 5-ից 11 տարեկան երեխաների համար դեղաչափը կազմում է 12 տարեկան և բարձր տարիքի մարդկանց դեղաչափի մեկ երրորդը:

12 տարեկան և ավելի բարձր տարիքի երեխաները կստանան պատվաստանյութի 2 դեղաչափ՝ 3-ից 6 շաբաթ տարբերությամբ:

## Հիշեք նրանց երկրորդ ժամադրության մասին

Կարևոր է, որ ձեր երեխան ստանա պատվաստանյութի երկու դեղաչափ, քանի որ երկրորդ դեղաչափը ապահովում է լիարժեք պաշտպանություն COVID-19-ից և ապահովում է, որ պաշտպանությունն ավելի երկար տևի:

## Համաձայնություն

Ծնողներից կարող է պահանջվել համաձայնություն տալ իրենց երեխայի պատվաստման համար:

Ընդհանուր առմամբ, երեխայի ծնողը կամ օրինական խնամակալն իրավասու է համաձայնություն տալ պատվաստման համար: Որոշ նահանգներում և տարածքներում ավելի բարձր տարիքի դեռահասները կարող են իրենց համաձայնությունը տալ:

Ձեր երեխայի COVID-19-ի դեմ պատվաստումը կգրանցվի նրա Immunisation History Statement-ում: Եթե ձեր երեխան 14 տարեկան և ավելի մեծ է, դուք այլևս չեք կարող մուտք գործել նրա Australian Immunisation Record-ը գաղտնիության նկատառումներից ելնելով: Դուք կարող եք ստանալ նրանց պատվաստման պատմության քաղվածքը, եթե ունեք նրանց համաձայնությունը: Հավելյալ տեղեկատվություն հասանելի է Services Australia-ի միջոցով՝ <https://www.servicesaustralia.gov.au/how-to-get-immunisation-history-statement>

## Հավելյալ տեղեկատվություն

COVID-19-ի դեմ պատվաստանյութերի մասին հավելյալ տեղեկատվության համար, այցելեք [www.health.gov.au/covid19-vaccines-languages](http://www.health.gov.au/covid19-vaccines-languages) կամ զանգահարեք National Coronavirus Helpline **1800 020 080** հեռախոսահամարով: Թարգմանչական ծառայությունների համար, զանգահարեք **131 450** և խնդրեք միացնել National Coronavirus Helpline: